

3-26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՅԱՐՅԱՄԱՍԻԴԻ ԱՆԳԻՏ ԻՎԱՆԻ

ՍԱԴԻ ՀԵՂԱՅԱԹԻ ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԺԱՌԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Ժ. 01.07- «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Johny Peass.

Play

Ալբորդ Տ

ԵՐԵՎԱՆ-2014

Ալբորդ
այցելուց

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական դեկավար՝

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՎԱՐԴԱՍ ՍՏԵՓԱՆԻ ՌՈԿԱՆՅԱՆ

Պաշտոնական ընդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դրկտոր, պրոֆեսոր
ԱՐՄԱՆԻ ԿՈՉՄՈՅԻ ԿՈՉՄՈՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու
ԹԱՍՎՐ ԼԱԶԱՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. մարտի 28-ին ժամը 14.00-ին ՀՀ ԳԱԱ
Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող Բ03-ի հայ և
արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում: Դասցեն՝
Երևան, Գրիգոր Լուսավորիչ, 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաջված է փետրվարի 26-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների
թեկնածու՝

Ա. Մարգարյան Ս.Ա. Մարգարյան

ԱՃԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքը նվիրված է իրանցի բանագետ Սահել Հեղայաթին, նրա
բանագիտական ժառանգությանը և իրանական ազգագրագիտության մեջ
ունեցած դերակատարությանը:

Թեև իրանի բազմահազարամյա մշակույթը թույլ է տալիս գիտականորեն
մշակելու և կազմակերպելու բանավոր արվեստի գիտական ըմբռան
սկզբունքները, այնուամենայնիվ բանահյուսագիտությունը իրու գիտություն
ձևավորվել է համեմատաբար ուշ՝ XX դարի սկզբին: Բանահյուսական
և ազգագրական վիթխարի ժառանգությունը կարծես դրւս է մնացել
ուսումնասիրողների հետաքրքրությունների շրջանակից: Նույնիսկ ժամանակի
դասական համարվող գրականագետների կողմից այս բնագավառում
իրականացվող հետազոտությունները և ուսումնասիրությունները
գրականագիտական չափումներով չեն արժենորվել:

Ավելորդ չեն նկատի առնել այն հանգամանքը, որ իրանական
գրականությունը իր պատմության ընթացքում սերտորեն առնչվել է
ժողովրդական բանահյուսությանը:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է այն մեջ հետաքրքրությամբ,
որն իրենից ներկայացնում է իրանում բանահյուսագիտության և ազգագրության
ձևավորումը որպես գիտություն: Իսկ այդ ժամապարհի առաջնորդն ու նրան
համակարգային բնույթը հաղորդող անշուշտ Սահել Հեղայաթն է: Ելեւով այս
հանգամանքից մենք անդրադարձել ենք Ս. Հեղայաթի կյանքին ու
ստեղծագործական էջերին, բանագիտության ասպարեզում նրա մշակած
գիտական ծրագրին:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության արդիականությունը կայանում է նրանում, որ մինչ
այժմ հայ գրականագիտության մեջ Ս. Հեղայաթը որպես բանահյուսագետ և
ազգագրագետ համակողմանի չի ներկայացվել: Իսկ նրա բանահյուսական
ժառանգության ուսումնասիրումը բացահիկ կարևորություն ունի իրանական
ժողովրդի բանավոր խոսքի, տարբերակների ու պատումների, ժողովրդի
կենցաղի, նախնական պաշտամունքի, հերանոսական և այլ կրոնների
պատմության, դրանց վերաբերյալ նյութերի հավաքագրման և հետազոտման
մասին ընդգրկուն պատկերացում կազմելու առումով:

Ցավոր, այսօր հայ գիտական և գրական շրջանակներում հայտնի են մեկ-
երկու բարգամանություններ, որոնց թվում՝ «Այդ հայոց» պատմվածքի
թարգմանությունը (Նարցիս / գրական, գեղարվեստական, մշակութային
հանդես, թիվ 1, էջ 69-73, բարգմանությունը՝ Նունե Հովհաննիսյանի):

ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱԸ ԱՌԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր ուսումնասիրության առարկան Ս. Հեղայաթի բանահյուսական,
ազգագրական և գրական գեղարվեստական ժառանգությունն է, նպատակը՝
նրա ստեղծագործության ճանապարհով Երևան հանել իրանական

բանակուսական ժառանգության ներմուծումը նրա գեղարվեստական ստեղծագործությունների մեջ և ներդրումը իրանում բանագիտության ազգագրագիտության որպես համակարգված գիտության ծևավորման մեջ: Դաշվի առնելով նախկինում ստեղծված ժառանգությունը՝ մենք փորձել ենք առավել համակողմանի ուսումնասիրություն կատարել: Մենք մեր առջև խնդիր ենք դրել նաև ուսումնասիրել Ս. Հեղայարի և Եվրոպացի գիտնականների համագործակցության ուղիներն ու նրանց հետ հեղինակի ունեցած հարաբերությունները:

Հիմնվելով ուսումնասիրության վերոնշյալ նպատակային ուղղվածության վրա՝ աշխատանքում առաջարկված են հետևյալ խնդիրները:

- Նկարագրել այն ժամանակաշրջանը և միջավայրը որտեղ ծնվել և դաստիարակվել է Ս. Հեղայարը, ներկայացնել երկրում տիրող ծանր տնտեսական վիճակը, քաղաքական բարոյ և ճնշող պայմանները, որոնք ճագատագրական հերթ են խաղացել Ս. Հեղայարի աշխարհայացքի ծևավորման և աշխարհընկալման մեջ, ընտանիքի և մտերիմների հետ հեղինակի ունեցած հարաբերությունները, որոնք էական նշանակություն են ունեցել նրա կրթության և դաստիարակության հարցերում:

- Համակողմանի ներկայացնել այն հիմնաքարերը, որոնք կազմել են հեղինակի ստեղծագործական ատաղջը, բացահայտել նրա գրականության վրա միջավայրի ազդեցության շրջանակները:

- Վերլուծության ենթակել հեղինակի գրական-գեղարվեստական ստեղծագործական ժառանգությունը, ներկայացնել բանահյուսագիտության և ազգագրության ուսումնասիրության ոլորտում նրա բերած նպաստը, երևան համել իրանում բանահյուսագիտության զարգացման հեղայարական հայեցակարգը, որը հիմնված է հեղինակի գիտական բարեխորդության և նյութի նոտեցման պատասխանատվության վրա:

- Շեշտել այն հանգանաքը, որ բանահյուսագիտությունը որպես գիտություն իրանում ծևավորվել է ենց Ս. Հեղայարի ջանքերի շնորհիվ, որը նա ներկայացրել է մշակված գիտական ծրագրի միջոցով: Այս առումով կարևոր նշանակություն ունեն նաև նրա «Ծանոթ» («Չեքիար») և «Ներկայացնելու» («Հրաշքների երկիր») ուսումնասիրությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Սարել Հեղայարի բանահյուսական ժառանգությունը» թեմայով առենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք վերլուծական, իսկ հայկական բանահյուսական աղբյուրներին դիմելիս հաճախ պատճահանմատական մեթոդներով: Աշխատանքն իրականացնելիս ընթերցվել և մշակվել են թեմայի հետ առնչվող բոլոր նյութերը՝ գեղարվեստական գրականություն, մենագրություններ, մամուլ, կատարվել է նյութերի դասակարգում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Հեղայարը XX դարի իրանական մշակույթի և գրականության կարևորուն դեմքերից է, մեծանուն գրող, բանահյուսագիտ և ազգագրագիտ, ուս գիտա-գրական ժառանգության հայ ընթերցողը ցարդ մնացել է անտեղյակ: Նրա մասին գուցե հյանան միայն սահմանափակ թվով արևելագետ մասնագետներ: Միջդեռ անհնարինակ համար պայմաններում ավելի մեծ հնարավորություններ կամ մեր դրացի պետության մշակութային ասպարեզի երևելի հնանաշելու համար:

Ս. Հեղայարը սիրված և ճանաչված գրող է, սակայն նրա գրական բազմաբնույթ ժառանգության մեջ առաջնահերթ կարևորություն են ներկայացնում բանահյուսագիտական և ազգագրական ուսումնասիրությունները և ստեղծագործությունները, և մենք խնդիր ենք դրել մեր առջև բացահայտելու հենց Հեղայար բանահյուսագիտին՝ այսպիսով փորձելով փոքր-ինչ լրացնել երկու երկրների մշակութային ասպարեզի այդ բացը:

Աշխատանքը կարող է օգտակար լինել մասնավորապես իրանական բանահյուսագիտությամբ, ազգագրագիտությամբ և մշակույթով գրադպու գիտնականների, նաև իրանագիտության ֆակուլտետի ուսանողության համար:

ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՎԱԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԿՊՑՈՒԽՆԵՐԸ

Ս. Հեղայարի գրական ժառանգության անդրադարձել են թե՛ իրանական և թե՛ արտասահմանյան արևելագետ մասնագետներ ու մշակույթի գործիչներ: Մենք հնարավորինս օգտվել ենք այդ աղբյուրներից: Իրանական գիտնականներից են Յահյա Արյանփուրը («Az Nîmâ tâ rûzegâr-e mât, vol. 3», 1387), Ենջավի Շիրազին («Farhang-e mardom vataraz-e gêrdâvarî va nêvêstan-e ân», 1346, «Jân-e 'âryat» in Pažûheshâ-ye adabî, 1381), Սոհամման Զաֆար Մահջուրը («Adabyât-e 'âmyânâ-ye Îrân», 1386), Սոհամման Զարթօլզանը («Sâdêq Hêdâyat va marg-e nêvîsandeh», 1384), Իրաջ Ավշարը («Hêdâyat va nêzâm-e gêrdâvarî-e farhang-e mardom-e Îrân», 1382), Զահանգիր Ֆորուհարը («Pažûheshâ-ye Hêdâyat dar bâvarhâ-ye Îrânyân», 1381), Սոհամման Ռատեմյանը («Darbâr-e ye Hêdâyat az nêgah-e orûpâyân», 1384), Յուշան Ռեթիարը («Pažûheshgarân-e Mo'âsér-e Îrân», 1387), Ուզա Սարշարը («Râz-e shohrat-e Sâdêq Hêdâyat», 1388), Փարսիմա Սոշավեզին («Rûy-e dîgar-e sêkê-ye Hêdâyat», 1386), Ս.Ֆ. Ֆարզամնեն («Sâdêq Hêdâyat dar fâr-e 'ankabût», 1384, «Âşnâyi bâ Sâdêq Hêdâyat», 1387), Մարյամ Դանայի Բորումանդը («Sâdêq Hêdâyat dar bût-e naqd o nazar», 1377) և շատ ուրիշներ:

Մեր առենախոսության մեջ ներառված են Ս. Հեղայարի և իրանի ժամանակակից գրականության մասին վերլուծական նյութեր հայ ուսումնասիրող-գիտնականներից (Մովսիսյան Հ., Շեխոյան Լ., («Ժամանակակից պարսիկ գրականության պատճենության ակնարկներ (1941-1978)», 1989), Բուղայյան Ա., Սովուսյան Հ., Շեխոյան Լ. («Սոցիալական մոտիվները ժամանակակից պարսկական արձակում», 1970) և ուրիշներ):

Օգտվել ենք նաև ոռու և եվրոպացի արևելագետների հոդվածներից և ուսումնասիրություններից՝ Կոսլակով Հ. (Советская этнография – 2, Москва – Ленинград, 1949, стр. 230), Կոմիսար Դ. (Советская Востоковедение, 4, М., О жизни и творчестве Садека Хедаята 1956, стр. 56), Ռոզենֆելդ Ա. (Восточный альманах, Сборник. Выпуск первый, М., 1957, стр. 237), Օրանսկի Ի. (Введение в иранскую филологию, М., 1988), Humbach H. («The heritage of Zarathushtra» (A new translation of his Gatas), 1994), Masse H. («litteraturs populaires de tout les nations v.1», 1938, «Contes en Populaire», 1925), Monti V. «Sâdêq Hêdâyât va âsâr-e Ӧ», tr. Qâemeyân H., 1382:

Աշխատանքը կատարելիս ուսումնասիրել ենք Ս. Ջեղայարի բնագրերը, նրա բանագիտական և ազգագրագիտական ժառանգությունը: Ձեռքի տակ ունեցել ենք ինչպես ծավալուն ուսումնասիրություններ, այնպես էլ հրապարակագրական նյութեր՝ տպագրված մամուլում հիմնականում «Soxan» և «Mâstiqî» ամսագրերում: Որոշ դեպքերում դիմել ենք նաև համացանցային աղբյուրների:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅԹ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից (յուրաքանչյուր գլուխը երկու ենթագլուխներից), եղրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Շարադրված է 134 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՊԵՐԻ ՋԵՂԱՅԱԹԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԻԲՐԵԿ ԳՐՈՂ ԵՎ ԲԱԼԱԳԵՏ

Այս գլուխը ստորաբաժանված է երկու ենթագլուխների՝ «Պատմության և հասարակության խնդիրները Ս. Ջեղայարի ստեղծագործություններում» և «Ս. Ջեղայարի արձակի բանահյուսական հենքը»:

Առաջին գլուխը ներկայացված է Իրանի քաղաքական և տնտեսական վիճակը, դրա ազդեցությունը Ս. Ջեղայարի կյանքում:

Իրանը XIX դարի սկզբում սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային բարդ ու հակասական պայմաններում էր գտնվում: Սա այն ժամանակաշրջանն է, երբ ի հայտ են գալիս հակարծնապետական, մշակութային, լուսավորական շարժումները: Ժողովրդական զանգվածների միջից հայտնվում են առաջնորդներ, որոնք համեստ են գալիս օտար երկրների ունդգործությունների դեմ պայքար ծավալելու կոչերով: Պայքար, որի սամերը երևան էին եկել դեռ Սեֆյան դինաստիայի շահերի իշխանության շրջանից և ուղղվել Ղաջարական դինաստիայի Նասեր է Ռիզ շահի անողոք քաղաքականության դեմ, որ երկիրը հասցել էր ծայրահեղ չքավորության և տնտեսական քայլարյան եղին:

Նասեր էր Ռիզ շահը, լինելով փառամու և ճանփորդությունների սիրահար, ձգտում է ուղիներ բացել դեպի եվրոպական առաջադեմ երկրներ: Կրթամշակութային կեանքը հետզիտես աշխուժանում է: Շահի հրամանով նույնիսկ ուսանողներ էին եվրոպա ուղարկվում: Այդ տարիներին քարգմանություններ են կատարվում համաշխարհային գեղարվեստական

գրականությունից, հայտնի օտար գիտնականների ուսումնասիրություններից և հետազոտություններից: Դրատարակվում են օրաթերթեր և անսագրեր երկրում և երկրից դրւու: Այդուհանները, իրանում ստեղծված սոցիալական վիճակը չափազանց անմիտիար էր:

XIX դարի երկրորդ կեսից երկիրը ոչ միայն մշակութային զարգացման նոր շրջան է մուտք գործում, այև զարկ է տրվում առարտա-արդյունաբերական ոլորտին, բայց իշխանության վարած սխալ քաղաքականության հետևանքով երկիր հանում է ծանր կացության: Դրապարակ են հջոնում մշակույթի ազգային գործիչներ: Իրանը իրենց մտավախությունները և վերաբերնունքը արտահայտում են գրականության միջոցով, հրապարակախոսական ելույթներով և քաղաքական հոդվածներով: XX դարի առաջին տարիներին նպաստավոր պայմաններ են ստեղծվում գրականության զարգացման համար: Քաղաքական և մտավոր կյանքում տեղի ունեցած այս վերելքում էլ ծևավլովել է Սահեր Ջեղայար արվեստագետը, ծեռք բերել զաղափարական հասունություն, ուրույն մտածելակերպ, այն, ինչ կոչվում է աշխարհայացք:

Ս. Ջեղայարը (1903-1950) մտավորական և ազնվական ընտանիքի զավակ է: Միջնակարգ ավարտելուց հետո 1926 թ. ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Եվրոպա: Նա իր ամբողջ ազատ ժամանակը նվիրում է ընթերցանության և լայն ճանաչողություն ծեռք բերում եվրոպական, ուսուական և ամերիկյան գրականությունից, սակայն ուսումը անավարտ է բռնում:

XX դարի 20-ական թվականներին Իրանում քաղաքական քառսային վիճակ էր տիրում, նույն ժամանակահատվածում ստեղծվում են գեղարվեստական գրականության նոր ժամանակաշրջան՝ վեպ, պատմվածք, վիպակ, նովել, որոնք հնարավորություն են ընձեռում պատկերելու Իրանի սոցիալական կյանքի արատները: Իր ստեղծագործություններով պարսկական գրականության զարդումից մեծ ազդեցություն է ունենում նաև Ս. Ջեղայարը: Փարիզում ապրած հոգեբանական վտանգմերով լի տարիները մշամանանակ տալիս են իրենց թե՛ դրական, թե՛ բացասական պտուղները: 1928 թ. ինչ-ինչ պատճառներով ինքնասպանության փորձ է անում և բարեխախտաբար փրկվում է: Մյուս կողմից նոր գրական աշխարհը առավել արգասավոր է դառնում:

Եվրոպայից վերադառնալուն պես, տեսնելով երկրի տնտեսական և քաղաքական վատթարագույն պայմանները, բռնկվում է հակահշանական պայքարի կրակով:

1936 թ. (1315) Ս. Ջեղայարը մեկնում է Ղանգաստան, այնտեղ առիր է ունենում սովորելու պահլավերեն, որի արդյունքում կարողանում է պահլավական հուշարձաններից քարգմանություններ կատարել. «Կârnâmêye Ardeshîr-e Bâbâkân» («Արքախշիր Փափարանի վարքագրությունը»), «Gojastê Abarâlî» («ԱնիջավԱրալիշ»), «Şâhrêstânîhâye Îrânshahr» («Իրանի քաղաքները»), «Yâdêgâr-e Jâmâsh» («Ջամասրի հիշատակարանը»)¹:

1941 թ. ստեղծվեց «Hêzbed tûdê-yê Îrân» (Իրանի ժողովրդական կուսակցություն) կոմունիստական տիպի կուսակցությունը: Ղանճականում գործելով Մոսկվայի հրահանգներով՝ այն դարձավ ազդու լօակ Խորհրդային Սիոնության ծեռքում՝ Իրանի նկատմամբ «սովետային» քաղաքականություն

¹ Hêdâyât S., Nêvêstîhâye parâkandeh, bê küşç-e Qâemeyân H., Tehran, 1385, pp. 325-338, 402-422, 423-434.

Հիրագործելու գործում: Նրանց դրոշի տակ են հավաքվում երկրի աշխատավորությունը, առաջադեմ մոտավորականությունը, արկեստագետներ և գրողներ: Ա. Յեղայարի համար ստեղծվում են աշխատելու և պայքարելու նոր հորիզոններ: Նա սկզբում կուսակցության պայքարատենչ քաղաքական շարժումներին էր մասնակցում, նույնիսկ համագործակցում էր նրանց հետ: Կուսակցությունն ուղղում էր գրողին դարձնել այն, ինչ որ իր գաղափարախոսությունն էր թելադրում: «Բնականաբար ծախակղողյանները Յեղայարին այսահին ներկայացնելուց առավելագույն օգուտը կրադեին և նրան կզրաբեին դեպի իրենց»²: Կուսակցության քայլերը, սակայն, նրա մեջ կասկածներ են առաջանաւ: Յետզինեւու ինքը և իրեն շրջապատող երիտասարդները գիտակցում են իրականությունը, հիմասրափակած հրաժարվում որևէ համագործակցությունից և հեռանում: Ա. Յեղայարը ճնշված և մերժված զգացումով, չունենալով ապագայի հեռանկար, 1950 թ. (1329) վերադառնում է ֆոնանսիա, որտեղ կնքում է մահկանացուն:

Առաջին ենթագլուխում՝ «Պատմության և հասարակության խնդիրները Ս. Հեղայաթի ստեղագործություններում» անդրադարձել ենք հեղինակի գրական ստեղծագործություններին ու ուսումնասիրություններին, որոնք ուղակի ազդված են Երկրում տիրող քաղաքական և տնտեսական բարդ պայմաններից: Ս. Հեղայաթի գրական շնորհը Երևան է եւել դեռևս պատմանեկության տախներից, երբ դպրոցական ընկերների համար հրատարակում էր «Տեղական առաջնորդ» («Տեղական առաջնորդ») թերթը: 1924 թ. (1303) տպագրվում է Ս. Հեղայաթի առաջին պատմվածքը՝ «Zabān-e hāl-e yēk olāq bē vaqt-e marg» («Ավանակը մահվան պահին»): 1929 թ. գրում է «Aśīr-e farānsavī» («Ֆրանսիացի գերին»), «Aīsānē-ye āfarānēš» («Արարչագործության առասպելը»), «Hājātāqā», «Al b'asīat ol īslāmīat fil bēlād ol faranjyē» («Խոլամի առաքելությունը Եվրոպական Երկրներում») ստեղծագործությունները, «Zēndēh bē gūr» («Կենդանի քաղվածք») ժողովածում, և իր գլուխագործոցը՝ «Būf-e kār»-ը («Կուլյ բուն»):

Ա. Յեղայաթի Յնդկաստան ուղևորության արդյունք է նաև հայրենասիրական, բայց միաժամանակ երգիծանրով լի «Միհարաստ» («Յայենասերը») պատմվածքը, որը տպագրվել է 1941 թ. (1320) և տեղ գտնել «Sag-e vēlgard» («Թափառաշրջիկ շունը») ժողովածովի մեջ: Նրա 30-ական թթ. պատմվածքները՝ «Mohanče»-ը («Միջնորդ ամուսին»), «Mordēxārhā»-ն («Գիշակերները») («Sē qatrē xān» («Երեք կաթիլ արյուն») ժողովածովից), «Parvīn doxtar-e Sāsān»-ը («Սասանի դուստրը՝ Փարվին»), և «Ātaš parast»-ը («Կրակապաշտ»), իրենց սոցիալական խոր բովանդակությամբ, դեպքերը և մարդկանց բացահայտելու առանձնահատկությամբ արժանանում են հասարակության գնահատանքին և ուշադրությանը: Նույն ժամանակահատվածում՝ «Rob'e» (քառյակ) գրական խմբակի հետ համագործակցության տարիներին, Ա. Յեղայաթը, Շին Փարորով Ազամը և Բողոք Ալավին երեք առանձին պատմվածքներ են գրում և կազմում են «Anīrān» (Ոչ իրան) ժողովածուն: Շին Փարորով Ազամը՝ «Fath-e Ēskandar»-ն («Ալեքսանդր Սակեդոնացու արշավանքը») է գրում, Բ. Ալավին՝ «Hojūm-e 'arab»-ը («Արաբների հարձակումները»): Իսկ Յեղայաթը ներկայանում է «Sāyē-ye

տօգօլ» («Սոնդովի ստվերը») պատմվածքով։ Նա Ս. Մինովի համագործակցությամբ գրում է նաև «Mâzyâr» դրաման։

1932-1934 թթ. (1311-1313) լույս է տեսնում «Տեղական պատմություն» («Երեք կարիլ արյուն») ժողովածուն (տասնմեկ պատմվածքով՝ «Դաշնակոլ», «Անդ հանոմ» և այլն), «Տաշում առաջարկ» («Տաշում առաջարկ») ժողովածուն (յոր պատմվածքով՝ «Տ. G. L. L.» և «Արական պատմություն» («Տիկինիկը վարագույիր ետևում») և այլն), «Ալավիտ հանոմ», «Խար-ե դայլ» («Սերի ավանակը»), «Վազ-վազ սահաբ», «Տարանհայե Խայյամ» («Խայյամի երգերը»), նաև «Էսֆահան նեշ-ե յահան» («Սպահանը աշխարհի կեսը»), և այլն, որոնք գրել է Ֆրանսիայից Վերադառնապուր հետո:

Ս. Քեղայարի կանացի կերպարներով աչքի ընկնող պատմվածքներն են՝ «Lālēh», «'Alavīgē xānom», «Ābjī xānūm», «Kātīgā», «Mādēlēn», «Sāmpīngēh» (Փրանսերեն լեզվով), «Zanī kē mardaš rā gom kard» («Անուսանուն կորցրած կինը»), «Bonbast» («Փակուլիթի») և այլն: Նշենք, որ կանաց կերպարների հանդիպում ենք նրա գրեթե բոլոր պատմվածքներում: Երգիծանքի բողի տակ է ներկայացնում իր կյանքի վերջին հրաշալիքներից «Tūp-e morvār» («Մարգարտե թնդանոթ») պատմվածքը:

Ո. Յեղայափի զրաքննադատական հոդվածների լավագույն նմուշներից են «Robā'iyāt-e Xayyām» («Խայյամի քառյակներ»), «Çand noktēh darbārēye Vīs va Rāmīn» («Սի քանի նշանը Վիս ու Ռամինից»), «Payām-e Kāfka» («Կաֆկայի պատղամը»), որոնց մեջ բացահայտվում են գրականագետի թօպիսներուն և տաղանդը՝ հասարակությանը ճանաչելի դարձնելու նորարար և ժամանակակից արվեստագետներին: 2006 թվականին Յասան Ղանմյանը հրատարակում է նրա ցանուցիր Երկերը՝ «Nēvēstēhāye parākandēh» («Ցանուցիր ետք») խորագրի տակ:

Ս. Յեղայարը սիրում է նաև Երկրի նախահսլամական շրջանի պատմությունը և մշակույթը, շատ գգուշությամբ և ակնածանքով է վերաբերում դրանց: Քաջատեսյակ լինելով իր ազգի մշակույթին, առասպելաբանությամբ՝ նա սկսում է գրի առնել ժողովրդի երգերը, հերթափները, ասացվածքները, ստվորույթները, ծեսերը, վարք ու բարքը, նաև ներկայացնում ֆոլկորի նյութերի հավաքման ձևը, աշխատանքի ծրագիրն ու ուղղվածությունը: «1931-1933 թթ. նրա հրատարակած Երկու փորձիկ գրքերը «Օսանեհ»-ն («Յերիաբ») և «Նեյրանցեստան»-ը («Յաշըների Երկիր»), սկիզբ դրեցին երնդրափիայի և ֆոլկորի նյութերի ամբողջացմանը և հանդիսացան իրանական ժողովրդական արվեստի և կենցաղի ուսումնասիրման աղբյուր արևմտաեվրոպական գիտնականների հետազա աշխատությունների համար»³:

U. Եթեյաքը իրանի ժամանակակից գրական աշխարհում առաջիններից էր, ով աշխատեց այս ուղղությամբ և դպրոցական շատերի ուսուցիչը:

Երկրորդ՝ «Սաղեղ Յեղայարի արձակի բանահյուսական հեմքը» ենթագլուում Ս. Յեղայարը ներկայացվում է ոչ միայն նորավետի և կարծ պատմվածիք վարպետ, այլև որպես բանահավաք, որպես իրանում գիտության այս ոլորտի սկզբնաղիք և կազմակերպիչ: Քաջածանոր լինելով իրանական բազմաժանր հարուստ բանահյուսությանը և արժեորենով այն որպես իր ժողովորի աշխարհընկալման և խոսքարվեստի համաձուլվածք, նա չէր կարող հայտնի բանահյուսության արտահայտչական հնարակորությունները չօգ

² Majalē-ye Sēpīd o Sīyāh, 1346, vol.15, no. 5, p.16.

8

³ Кислаков Н., Советская этнография – 2, Москва – Ленинград, 1949, стр. 230.

տագործել իր գեղարվեստական երկերը կերտելիս: Ֆրանսիացի գրող ժան Կամբրոյը նրա մասին հետևյալն է գրում. «Սադեղ Շեղայաքը այն կարկառուն դեմքն է, ով լավատեղյակ է արևելի հին գրականությանը, իսկ արևմուտքից յուրացրած՝ եվրոպական ծաղկանցում աճած վարդերը հաջողությամբ պատվաստում էր Խապահնի կարմիր վարդերի հզոր թիերին»⁴: Այս առումով նրա նախասիրությունները տարածվում էին գրեթե բոլոր ժանրերի վրա հերիաք, երգ-հատիկներ, ասացվածքներ: Ընդ որում նա կարողանում էր բանարվեստից քաղված նյութը հնչեցնել հասարակ ժողովրդի կենցաղին, տվյալություններին և համեստածերին ներդաշնակ: Ս. Շեղայաքը հաստնության տարիներին ժողովրդի կենսակերպն ու աշխարհայացը առավել մոտիկ ուսումնասիրելու և ձանաշելու համար շրջում է գյուղերն ու ավանները: Նա, տիրապետելով արդի պարսկերեն լեզվի նրբություններին, ժողովրդական բանահյուսության հիմքից գրական գանձեր հյուսեց:

Ս. Շեղայաքի պատմվածքների հերոսները ամենատարբեր խավերի ներկայացուցիչներ են՝ արվարձանների բնակիչներ, գյուղացիներ, բահարաշրջիկներ, հանցագործներ, թերուս, երեմն նաև կրթված մարդիկ: Ժողովրդական բար ու բանը այրախն բարձր գնահատող գրողը մարդկանության բարձր արժանիքները պետք է որոներ և տեսներ հասարակ մարդկանց միջավայրում, այդ միջավայրի վառ անհատականությունների մեջ: Այդպիսին է Դաշ Աքոլը՝ համանուն պատմվածքի հերոսը: Պատմվածքում վարպետորեն գրուակցված են երգիծական, հոգեբանական և ռոմանտիկ մոտիվները:

Հնտորեն օգտագործելով մտահացած սյուժեի հնարավորությունները՝ Շեղայաքը մի պատմվածքի սահմաններում բանահյուսական բազմաժանր նյութը (ասացվածք, ամենք, երգ, օրինանք) գործակցում է որևէ ծեսի, հանդիսանքի պատկերման հետ: Դրա շնորհիվ ստեղծագործությունը գրական-գեղարվեստական արժեքից զատ ծեռք է թերում ազգագրական ծանազողական նշանակություն: Ենշտ այդպիսին է «Այել հանոմ» պատմվածքը, որը ամուսնության տարիքն անցած մի առջև անձնական ողբերգության պատմությունն է: Իրավագործ վիճակի հետևանքով կանանց խեղված ճակատագրերի և մի, այդ ժամանակ հաճախադեպ խնդրի է անդրադարձել Ս. Շեղայաքը: «Zanī kē mardaš rā gom kard» («Ամուսնուն կորցրած կինը») պատմվածքով: «Taxt-e Abū nasr» («Արու Նասրի գահը») պատմվածքը գրված է բարձր հայրենասիրական ոգով, իսկ «Չաղալ» («Մագիլ») պատմվածքում վարպետ գրչով ընդգծում է մորը կորցրած երեխաների քույր և եղբոր հոգա-հոգեբանական վիճակը:

Կենդանական առակի կանոններով է գրված «Xar-e dajāl» («Ների ավանակը») վերնագրով պատմվածքը: Ս. Շեղայաքը կյանքի վերջին տարիներին այլևս անկարող էր հանդուրժել երկրում ստեղծված կամայականության մթնոլորտը: Դայրենասեր գրողի դաշնացածությունն ու զայրույթը դառնում էին անտիրապետելի, և նրա այլաբանությունը դառնում էր ավելի քան թափանցիկ: Այդպիսի թափանցիկությունը գերակայող է նրա «Tār-e morvār» («Մարգարտ թնդանոր») ստեղծագործությունում:

⁴Montī V., *Sādēq Hēdāyat va āsār-e ū*, maqālē-ye Žān Kāmbord, tarjome-ye Hasan Qaemyān, Tehran, 1382, p. 12.

Ս. Շեղայաքը, ի շարու բանահյուսության այլ ժանրերի, հատկապես արժեկորում էր հերիաքը՝ որպես ժողովրդի ակնկալիքներն ու աշխարհներներն անդրադարձնող գանձարան: Բնականաբար նա պետք է օգտագործեր և օգտագործել է այս ժանրի բազմաշանակ հնարավորությունները: Շերիաքի ժամանակով ստեղծագործելիս նա դրսուրել է խոսքի պարզության բացարձիկ կարողություն, ժողովրդի հետ նրա լեզվով հաղորդակցվելու հմտություն: Այդոինակ պարզության նմուշ է Ս. Շեղայաքի «Ābē zēndēgī» («Կենարար ջուրը») ստեղծագործությունը: Այլ ժողովուրդների հերիաքներից Ս. Շեղայաքի կատարած մշակումներից են «Laçak կէցնլա-յե զերմէշ» («Կարմիր գլխաշորով փոքրիկը»): «Sangūl mangūl», «Āqā տնշե» («Պարոն մկնիկը»), «Qēsē-ye gorg va bozqālē» («Գայլի և այծի հերիաքը»), «Pēsarak-e tanbal» («Ծույլ տղան»), «Qēsē-ye dandān morvārīd, gīs golābatān» («Մարգարտ ատամի, ոսկեթելծամի հերիաքը»):

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ ՍԱՊԵՂ ՇԵՂԱՅԱԹԸ ԻՐԱՍՎԿԱՆ ԲԱՍԿՅՈՒՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵԿ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՆԱՎՈՐՈՂ

Այս գլուխը նույնպես բաղկացած էրկրու ենթագլուխներից՝ «Իրանում բանահյուսագիտության զարգացման հերիաքական հայեցակարգը» և «Շեղայաքը բանահյակաքչական գործի նախաձեռնողը»:

Իրանում ֆոլկլոր բար, որպես գիտական տերմին, հանդես եկավ XIX դարի երկրորդ կեսից, իսկ բանահյուսագիտությունը և ազգագրությունը պարսկերն օբականության մեջ եվրոպացի արևելագետների ավելի ուշ շրջանի ուսումնասիրությունների արդյունք են: Իրանական բանահյուսության և ազգագրության նյութերի հավաքագրումը և ուսումնասիրումը գիտական հիմքերով փաստորեն սկիզբ է առնում Ս. Շեղայաքի ջանքերով: Մինչ այդ կատարված աշխատանքները կրել են հիմնականում նախապատրաստական բնույթ: Այսպես, եղել են մարդիկ, որոնք ջանադիր կերպով գործել են այդ ուղղությամբ, բայց դրանք մնացել են թերի կամ անավարտ: Իրանի բանահյուսության ուսումնասիրության զարգացման գործում ավանդ ունեցած արտասահմանցի այնպիսի գիտնական-արևելագետներ, ինչպիսիք են Զանրի Մասեն, Դ. Լորիմերը, Զեյնզ Մորիկեն, Արթուր Քրիստիանսենը, Յան Ուիքը, Դ. Կամիսարովը, Ն. Կիսլակովը, Վ. Ժոկովսկին, Լ. Փ. Էլվել Սաթոնը և շատ ուրիշներ:

Սեֆյան թագավորության տարիների ժամանակամբ, մշակմանը և իրատարակությամբ զբաղվել է գիտնական, հոգետրական Աղա Զամալ Խանսարին, իսկ Ղաջարյե ղինասոհիայի նախեր էր դիմ շահի գահակալության ժամանակաշրջանի ազատամիտ մարդկանցից՝ Սիրզա Շարիբ Էֆահանին: Ժողովրդական բանահյուսությամբ և ազգագրությամբ զբաղվող ժամանակի տաղանդավոր գրականագետներից է եղել նաև Զասան Սողանան (1898-1925): XX դարում քրտնաշամ և ամխոն աշխատանք են կատարում մի շարք գրողներ, ժողովրդական բանահյուսություն ուսումնասիրողներ Յուսեյն Բուհի Թերնանին, Ալի Աբբար Ղեհյուդան, Ամիր Ղուլ Ամինի Էֆահանին, Ֆաղոլահ Սորիի Ղեհյանին, և ուրիշներ:

Ս. Հեղայարի ժողովրդական բանահյուսության և ազգագրական ուսումնասիրության առաջին շրջանը արգասավորվեց «Օսանհ» 1931թ. (1310) և «Նեյրանցետան» 1933 թ. (1312) ուսումնասիրություններով: «Մասիգ» և «Տօխ» ամսագրերում են նրա հոդվածները՝ «Tārānēhā-ye ḥāmŷānē» («Ժողովրդական երգեր») և «Matalīhā-ye fārsī» («Պարսկական հեքիաթներ») և մի շարք այլ հեքիաթներ:

Առաջին «Իրանում բանահյուսագիտության զարգացման հեղայարդական հայեցակարգ» ենթագլխում անդրադարձ է կատարվում ժողովրդական բանահյուսական ժառանգության հավաքման աշխատանքի առանձնահատկություններին: Այս գործին գիտականորեն է վերաբերվել Ս. Հեղայարը: Փարվիզ Նաթել Խանլարին այս արիթրով հետևյալն է գրում. «Թենկուզ ժողովրդական բանահյուսության օգտագործումը գրականության մեջ Դեհիստորյան է վերագրվում, բայց այն մարդը, ով այս գործը ամենայն հմտությամբ, պատշաճությամբ և ուժով կատարեց, և իր ստեղծագործություններով պարսկերեն լեզուն ավելի արտահայտիչ և նույր դարձեց, Հեղայարն էր»⁵:

Ս. Հեղայարը արտասահմանյան ժողովրդական բանահյուսության նմուշներ ծեռք բերելու համար կապեր է հաստատում հայտնի արևելագետների հետ, ինչպիսիք են Արքուր Քրիստենսենը, Վ. Մինյուրափին, Դ. Կամիսարովը, Ուստի Լեսլին, Սոհամեդ Ալի Զամալզադեն և շատ ուրիշներ: Ս. Հեղայարը կարողացավ մեթոդներ մշակել, սահմանումներ ծնակերպել, որպեսզի ապագայում իրանական բանահյուսության ուսումնասիրողները հնարավորություն ունենան հավաքած նյութերը գիտական ճանապարհով օգտագործել: Նա իր գործը կատարել է նախառակի հստակ գիտակցումով: Նա երգեց չի ուղարկել խարուսելու իր հայրենակիցներին մրանց նասնակից դարձնելու ժողովրդական բանահյուսության հավաքագրման աշխատանքներին: Ս. Հեղայարը հետևողական լինելով իր աշխատանքի նկատմամբ, ծեռք է բերում մեծ շտեմարան: Նա այդ նյութով զբաղվողներին այսպես է դիմում. «Ժողովրդական բանահյուսությունը զվարճանք չէ. նրան պետք չէ համացիկ մոտենալ: Այս գործի համար համերերություն, ինացություն, ծիշտ մտածողություն և գիտական տեղեկացվածություն է հարկավոր: Այն փաստաթուղթը, որտեղ փոփոխություն է արված, կամ նախադասությունները գրական կառուցից հանված են, կամ բանահավաքն ըստ իր ճաշակի բարոյական, կրոնական, խրատական մտքեր է ավելացրել, որևէ արժեք չի ներկայացնում»⁶:

Գիտականության առաջնայնություն և նյութին մոտեցման պատասխանատվություն. ահա այս հիմնական տարրերը, որոնց վեա խարսխվում է բանահյուսագիտության և ազգագրականության մասին ունեցած հեղայարդական հայցակարգը:

Երկրորդ ենթագլուխ՝ «Հեղայարը բանահավաքչական գործի նախաձեռնող և կազմակերպիչ», վերաբերում է բանահավաքչական աշխատանքին և նրա արդյունավետությանը: «Օսանհ» և «Նեյրանցետան»

ուսումնասիրությունների հրատարակումից հետո (1931, 1933 թթ.) երանում ժողովրդական բանահյուսության և ազգագրական ուսումնասիրության ուղղությամբ տարվող աշխատանքները նոր բափ են ստանում: Խավաքագրված նյութերը մշակման և իրագործման համար դրվում են մշակույթի հիմնարկության վերահսկողության տակ, իմնադրվում է մարդաբանական բանգարան: Ս. Հեղայարը ժողովրդական բառ ու բանը և ազգագրական նմուշները գեղարվեստական խոսքի մեջ մատուցելիս չի աղավաղում, որովհետև նրա համար բուն նպատակը այդ ժառանգությամբ հարազատ մնալը է: Օրինակ ունենալով նրա ծրագրեր և ականջալուր իրողորմերին շատերը հետևեցին Ս. Հեղայարը ամենամեծ ծառայությամբ: Այդ բայում են Արողասեմ Էնջավի Շիրազին, Սոհամնեդ Զաֆար Մահջութը և շատ ուրիշներ:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ս. ՀԵՂԱՅԱՐԾ ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՍ

Երրորդ գլուխը իր հերթին ստորաբաժանված է երկու ենթագլուխների՝ «Ս. Հեղայարը՝ բանագիտության ժողովրդական մաս» և «Ա. Հեղայարի՝ ենթագլուխների»:

Ս. Հեղայարի բանն տարիների ուսումնասիրությունների արյունը միատեղված է «Farhang-e ḥāmŷānēye mardom-e īrān» («Իրանի ժողովրդական մշակույթ») գրքում: Այն բարկացած է երեք գլխից՝ ա) «Նեյրանցետան», բ) «Ժողովրդական մշակույթ» («Օսանհ», «Դայակների և մայրերի երգեր», «Օրորոցային երգեր», «Ժողովրդական երգեր», «Պարսկերեն առանձներ», «Ժողովրդական հավաքագրման մշակույթ», «Մի շրջանի ժողովրդական բանահյուսության հետազոտության ընդիհանուր ծրագիր»), գ) «Անտիպ ուսումնասիրություններ» («Պատմություններ և հեքիաթներ», «Երգեր», «Առանձներ և տեղական ասացվածքներ», «Հետազոտություններ» և «Նամակներ»):

Այս գլխում անդրադառնում ենք Ս. Հեղայարի բանագիտական ուսումնասիրությունների առաջին արգասիքը եղող «Օսանհ»-ին («Հեքիաթ», 1931): «Օսանհ»-ն բարբառային դարձած «Afšānēh»-ն է, որը նշանակում է հեքիաթ, ավանդավեպ, առասպել կամ գրուց: «Օսանհ»-ում հեղինակը խոսում է հասարակությանը պարզ և ոյուրընթաց ժամանակակից ժողովրդական ստեղծագործությունները փոկելու մասին: Նա ներկայացնում է մի շարք երգեր, որոնք ստեղծվել են հատուկ, արտակարգ կամ բախսորոշ հրավիճակներ ներկայացնելու համար, ապա նշում է, որ ժողովրդական երգերից շատերը նույնիսկ կրում են նախախմանական ժամանակաշրջանի, հատկապես «Անշտա»-ի ազրեցությունը, կօրինակներ է բերում: Ս. Հեղայարը մանմկական երգերի այն հեռուներից է խոսում, որոնք կենդանիներն են, և գտնում է, որ մանկական երգերը հանապատախմանում են երեխաների հոգեբանությանը այնպես, որ միշտ թարմ են մնում, և ոչինչ չի կարող դրանց փոխարինել: Այս երգերի կողքին ընդգրկել է նաև մի քանի մանկական խաղերգեր և հանելուկներ: Նա օրորոցայինները արժենորում է որպես մանկան ականջին հասու դարձող առաջին մեղեղիներ: «Ժողովրդական երգեր» («Tārānēhā-ye ḥāmŷānē») բանում Սադեղ Հեղայարը բարձր է գնահատում բանահյուսության այդ տեսակը՝ որպես ժողովրդի հույգերի, հոգսերի ու ակնկալիքների անմիջական

⁵ Majalē-ye Sērīd o Sīyāh, 1346, vol.15, no 11, p. 15.

⁶ Hēdāyat S., Farhang-e ḥāmŷānēye mardom-e īrān, Tehran, 1385, p. 259.

արտահայտություն: Ժողովրդական երգերի այս բարձր արժեարժումներում իսկ ակնյատ է Ս. Շեղայաքի նախանձախմբությունը՝ ոչ միայն փրկել ազգային ծաշկությի այդ գանձերը կորստից, այլև հետագա սերունդներին հանձնել որպան իրենց անխաթար, ամբողջական էությամբ:

